



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՆԱՀԻՆ — ՀԱՂՊԱՏ

Հայաստան աշխարհը արդարև թանգարան է բաց երկնքի տակ: Ներկայումս Խորհրդային Հայաստանում հաշվվում են մի քանի հազար պատմական հուշարձաններ, որոնք լավագույնս վկայում են մեր ժողովրդի ստեղծագործ ու շինարար ոգու մասին: Կառույցներ՝ պատմական և արդիական ամենուրեք կան, սակայն հայ ճարտարապետական կոթողներում ներդրված է մեր ժողովրդի հանճարը՝ քարձարավետ երևակայությունը, մտքի թռիչքն ու բանաստեղծական ոգին: Ահա այս բոլորի գեղեցիկ ներդաշնակությունը համաշխարհային ճանաչում ու մասնագիտական քարձր գնահատական են քերել մեր պատմական կոթողներին, որոնք, Հայաստան աշխարհը զարդարելով հանդերձ, ընդօրինակվել են հեռու հեռուներում և նույնիսկ մեր թվականության երկրորդ հազարամյակի սկզբից ինչ-որ չափով հիմք են հանդիսացել միջնադարյան եվրոպական, մասնավորապես գոթական ճարտարապետության համար:

Հայ ճարտարապետության պատմական կոթողները մեր քարձարավետ ու քարձրաճաշակ ճախինների տեսիլքի, երկնային ոգեկոչումների մարմնացումն են: Արդարև, Լուսավորչի տեսիլքն իր մարմնացումը գտավ աստվածակառույց Էջմիածնի Մայր տաճարով, հրեշտակները բազմեցին Զվարթնոցի երկնամերձ գմբեթներին.... Սակայն մեր պատմական հուշարձանները անկյանք չեն եղել. նրանցում աներևակայելի ճգնությամբ

մագաղաթին է հանձնվել հայ միտքը, պատմությունը, լեզուն, մանրանկարչությունը՝ գույների խեցո շուրջպարով: Դարեր շարունակ խնկաբույր կամարների տակ աստվածահաճո լեզվով Տիրոջը պատարագ են մատուցել, բայց հոգացել են և ազգի, մարդկության մասին, նրանց որպես պատարագ խորախորհուրդ մատչաններ են մատուցել: Դարերի ընթացքում պարտադրյալ ճակատագրի մոլոր ճամփաներով մեր հոգու ու մտքի բեկորների նույնիսկ ոչ ամբողջը հավաքվել է, ընկերացել, հզորացել ու կազմել հայ մատենագրություն, Մաշտոցյան Մատենադարան....

Օ՛հ խնկաբույր այս մատչանները, որոնք կներիքեին շատ ժողովուրդների, հազարամյակների.... Մեկուկես հազարամյակ քրված, մեկուկես հազարամյակ պահված, նոր հազարամյակներ սնող մայր արմատ....

Մրցություն եղել է հնում. նոր կառուցվող ամեն կոթողում հայ ճարտարապետն ու քարգործ վարպետներն աշխատել են նոր իմաստավորում, նոր բանաստեղծություն ու նոր հույզ դնել,— ահա ինչու Շինարար Բագրատունիները Հայաստանի հյուսիսում, Գուգարաց աշխարհում երկրորդել են հազարազանգ Անին, կառուցել Սանահինն ու նրա քույր վանքը՝ Հաղպատը: Իրար այսքան մոտիկ և իրարից այսքան տարբեր, մեկը մյուսից գեղեցիկ կառույցներ. ինչ շուայություն: Եվ իրոք իրենց հազարամյա գոյության ընթացքում այդ երկու քարե Բդեշխները հսկե-

ցին մեր Աշխարհը, արգասավորեցին հայ դպրությունը, շուրջին հայրողիների ազգային արժանապատվությունը և փառավորեցին հայ հանճարը:

Ո՛վ արարած, հայ՝ ուխտավոր, երկրորդությունս մտիր այդ վանքերից ներս, ուշադիր նայիր խաչվող կամարներին, որոնք քեզ հայկյան աղեղ կհիշեցնեն, շուրջով անցի՛ր քարձրադիր քարե նստարանների մոտով, որտեղ քո մատենագիրները, գրիչներն ու ծաղկողներն են ծալապատիկ նստել ու ունկընդդել հայ դպրության ուսուցչապետին՝ Գրիգոր Մագիստրոսին: Այո՛, երկրորդված է Անին այստեղ, Տրդատ ճարտարապետն իր մկրտությունը այստեղ, Հաղպատում է ստացել, այստեղ է նա երկնել, փորձով իմաստնացած, հավերժացրել Բագրատունյաց փառքը, կառուցել Անին, որ խոհունացած, մայրացած Գուգարքի նույն երկու հավերժահարսն է: Խուզարկու հայացքով նայի՛ր պատերին, քարերին. քո նախնիք դրանց մեջ, գաղտնարաններում հաճախ են պահել իրենց միտքը, արվեստը. անողոք է եղել թշնամին, նա այրել է քո մատյանները՝ գիտենալով, անշուշտ, որ Եղիշեն քեզ սխառգամել է. «Լավ է կոյր աչօք, քան կոյր մտօք», քանի որ այրն այն Մաշտոց անուն լույսով, բանականությամբ, մատյանով, Այբ, Բեն, Գիմով քեզ ավանդեց հավերժությանը....

Այստեղ, Հաղպատում է ծաղկել Մարգարե մանրանկարիչը քո հոգու մատյանը, որով այսօր և միշտ պիտի հիանան քաղաքակիրթ մարդիկ, ժողովուրդներ: Սանահին քարձուռնից անթարթ հայացքով ուղիղ նայի՛ր, լյուս սիրատուն քույրը՝ Հաղպատն է անտառով շղարշված, երկրից քարձրացած փռում իր

հմայքը, առավել ուշադիր նայի՛ր Զանգուկա-տանը, այո՛, հատուկ է դա, առանձնահատուկ նույնիսկ հայ ճարտարապետության մեջ. ականջ դի՛ր, հոգուդ մեջ կողոպտեցնեն անրևելի զանգակները՝ կանչելով դեպի լյուս, դեպի կյանք: Այդ զանգերի ղողանջների քաղցրալուր մեղեդու ներքո ստեղծվեց քո մատենագրությունը, ծաղկվեցին քո մատյանները, որոնք այս լուսավոր դարում իսկ հիացրին աշխարհին: Բարապանները լայնորեն բացեցին քո ժողովրդի առաջ համայն ազգերի մշակույթի թանգարանի դռները, որպեսզի որպես արժանի հյուր, առաջիններից առաջինների մեջ դու բազմես պատվո գահին, քանզի խավար դարերում, հաճախ նույնիսկ մեճակ՝ դու, որպես հավերժական քուրմ, վառ պահեցիր հեթանոսական օջախը, խնկաբույր բուրվառը....

Ասում են՝ գեղեցկին չեն սպանում. սակայն օտար ապատակողներ դարեր շարունակ սպանեցին մեր ժողովրդի՝ գեղեցկին ստեղծելու առաքելությամբ օծված, գեղեցկություն ստեղծող որդիներին, սակայն նա կառուցեց, կառուցեց. Արարատյան դաշտավայրում՝ Էջմիածին, Զվարթնոց, Հոփսիսիմե, Գայանե, Սյունյաց աշխարհում՝ Տաթև, Ծիրակում՝ Անի.... իսկ Գուգարաց աշխարհում՝ Սանահին ու Հաղպատ: Մայր Բնությունն ու հայրենի հողը ավելի խոնավոր գտնվեցին մեր հանդեպ՝ զո՛ւյգ քույրեր, երկիրը զսպեց իր ներքին գործությունները, որպեսզի դուք մնաք միշտ գեղեցիկ: Հասել եք մինչ այսօր. էլ ի՞նչ. նոր հոգատարությամբ, հայրենի պետական հոգատարությամբ կը մնաք որպես գեղեցիկ վկաներ դարերից՝ դարերին, հավիտենության...

